ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

18.09.2018թ. N 02/16.4/4651-18

<<ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ>> փակ բաժնետիրական
ընկերության գլխավոր տնօրեն
պարոն Անդրեյ ՊՅԱՏԱԽԻՆԻՆ

Հարգելի պարոն Պյատախին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ. Բաղդասարյանի և հեռահաղորդակցության օպերատոր <<Արմենիա Տելեֆոն Կոմպանի>> փակ բաժնետիրական ընկերության կողմից լիազորված անձ Գոռ Զատիկյանի միջև 2013 թվականի հուլիսի 24-ին կնքվել է էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված հեռախոսային կապի ծառայությունների մատուցման N 113603635 S4002 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հաշվի առնելով վերոհիշյալ ծառայությունների մատուցման կարիքի պահանջի վերացումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն 2018 թվականի հոկտեմբերի 1-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ մնացորդային 182870 (մեկ հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ գումարի չափով:

Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 2018 թվականի սեպտեմբերի 19-ին կտեղադրվի gnumner.am կայքում:

18-Sep-18

X

Հարգանքով՝

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727